

# Գաղտնիության Քաղաքականություն

*Ուժի մեջ է մտնում 7 նոյեմբերի, 2006 թ.*

Շնորհակալ ենք SDG&E-ի կայքէջը այցելելու համար: Մենք հանձն ենք առել պաշտպանել մեր կայքէջը այցելողների գաղտնիության ընդունելի ակնկալությունները:

## Երթևեկային Տեղեկույթ

Որպեսզի մեր այցելուների համար բարելավենք մեր կայքէջի օգտակարությունը, մենք ինքնաբերաբար հավաքում և պահպանում ենք մեր կայքէջի տեղեկույթի գրանցումներից այն վիճակագրական տեղեկությունները, որոնք վերաբերվում են ցանցի երթևեկային հոսքին և ծավալին՝ Երթևեկային Տեղեկույթ ("Traffic Data").

Երթևեկային Տեղեկույթը բաղկացած է հետևյալից՝

- Մարզի անունը կամ URL-ը, որտեղից այցելուն մուտք է գործել համացանց (օրինակ՝ «մի ընկերություն.com». «մի դպրոց.edu» կամ «մի գործակալություն.gov»).
- Համացանցի Արձանագրության Համարը.
- Համացանցի որոնիչի կամ «բրաուզեր»ի տեսակը. և
- Կայքէջ այցելության ամսաթիվը և ժամը

Երթևեկային Տեղեկույթը չի մատնանշում անհատ այցելուներին: Բայց և այնպես, Երթևեկային Տեղեկույթի օգուտն այն է, որ մեզ թույլ է տալիս բարելավել մեր կայքէջը և պահպանել նրա մատչելիությունը:

## Ընդհանուր Այցելուներ

Ընդհանուր այցելուների համար, որոնք չեն օգտագործում վավերացված մուտք պահանջող ծրագրեր, հնարավոր է, որ SDG&E-ն «կուկիներ» օգտագործի Երթևեկային Տեղեկույթ հավաքելու նպատակով: «Կուկիները» «ֆայլեր» են, որոնք տեղադրվում են այցելուի համակարգիչում, որպեսզի կայքէջը հսկի, թե անհատը ինչպես է օգտագործում կայքէջը: Ոչ մի փորձ չի կատարվի առանձին օգտագործողներին տարբերակելու, բացի եթե դուք քայլերի դիմեք ինքներդ ձանաչել տալու համար, օրինակ՝

- խնդրելով անհատական ծառայություններ.
- դիմում կատարելով հնարավոր աշխատանքի կապակցությամբ.
- SDG&E-ի փոստային ցանկում ընդգրկվելու խնդրանք ներկայացնելով.

- անօրինական վարմունքի կամ չլիազորված գործունեության կասկած առաջացնելով, կամ
- երբ օրենքի ներքո պահանջվում է օգտագործողի ճանաչումը:

SDG&E-ն ոչ մի երրորդ կողմի չի բացահայտի ձեր կողմից մեզ ներկայացված տեղեկությունները, բացի այն տարողությամբ, որ երրորդ կողմը այդպիսի տեղեկություն պահանջի SDG&E-ի համար իրականացնելու SDG&E-ի սեփական գործարարության նպատակով կատարվելիք ծառայություններ և բացի եթե օրենքն է դա պահանջում կամ երբ այն անհրաժեշտ է կայքէջը կամ SDG&E-ն պաշտպանելու համար: Մենք ձեր տեղեկությունները չենք հավաքի կամ վաճառի երրորդ կողմերի առևտրական նպատակներով:

### **Հաճախորդներ**

Կարող եք որոշել, որ ոչ մի անձնական տեղեկություն չհայտնեք SDG&E-ին - և այսուհանդերձ կկարողանաք մուտք գործել էջակայքի բաժինների մեծ մասը: Անձնական տեղեկությունը, այնուամենայնիվ, կարող է պահանջվել այս կայքէջը օգտագործելու համար, երբ՝

- Այցելուները ուզում են ստանալ այս կայքէջի միջոցով SDG&E-ի ընծայած ծառայությունները: Նման դեպքերում, մասնահատուկ տեղեկություն կպահանջվի այս կայքէջի միջոցով տեղեկություն ձեռք բերելու և օգտագործելու համար՝ ինչ վերաբերվում է այդպիսի ծառայությունների: Այդ տեղեկությունը կարող է ընդգրկել ձեր կողմից լրացումը որոշ ինտերնետային գրանցման ձևերի, գրանցման հաստատումը՝ սեղմելով «ընդունման կոճակներ» և/կամ օգտագործումը գաղտնագրերի, «կուկի»ների կամ ձեր ինքնությունը հաստատող այլ մեթոդների: Ինտերնետային ծառայության հանձնառությունների հետևանքով թերևս նաև պահանջվեն հետևումի շփումներ (ինչպես՝ հեռախոսով «կանչը վերադարձնելը» ["call backs"]) և պատասխաններ, որոնք վերաբերվում են օգտագործելի ծառայություններին – ներառած՝ հաշվեցույցները և վճարումները:
- Խնդրվում է ընդգրկվել SDG&E-ի փոստային ցանկերում, ինչպես այն ժամանակ առ ժամանակ կարող է ավելի մանրամասն նկարագրվել այս կայքէջում:
- Կապ է հաստատվում հնարավոր աշխատանքի կապակցությամբ:

Չնայած SDG&E-ն կդիմի բոլոր առևտրականորեն ընդունելի քայլերին, որպեսզի երրորդ կողմերին արգելի ձեռք բերել այս կայքէջի առնչությամբ SDG&E-ին մատչելի դարձած տեղեկությունները, ներառած՝ զգայուն տեղեկությունների ծածկագրումը և այլ տեսակի անվտանգության ընծայումը, հնարավոր է, որ երրորդ կողմը անօրինականորեն որսա տեղեկությունը և

SDG&E-ն չի ձևացնում, որ այդպիսի անօրինական գործունեությունները անհնարին կլինեն: SDG&E-ն պատասխանատու չէ որևէ այդպիսի գործունեության կամ այնպիսի դեպքերի, երբ այս կայքէջի կապակցությամբ օգտագործողին ընծայված գաղտնագիրը ձեռք է բերում երրորդ կողմը: Այն դեպքում, որ օգտագործողը համոզված լինի, որ որևէ գաղտնագիր երրորդ կողմը ձեռք է բերել առանց թույլատվության, ապա օգտագործողը պետք է անմիջապես կապ հաստատի SDG&E-ի հետ, որպեսզի գաղտնագիրը փոխվի կամ այլ քայլեր առնվեն ըստ պատշաճի: Այս ծանուցումը տրամադրելի պետք է լինի [info@sdge.com](mailto:info@sdge.com)-ին:

### **Գործունեությունների Հսկողություն**

SDG&E-ն շարունակ հսկում է ցանցի երթևեկը, որպեսզի հայտնաբերի վերկրման կամ տեղեկության փոփոխության, կամ այլապես կայքէջին կամ SDG&E-ին վնաս պատճառելու չլիազորված փորձերը: Հսկումը նաև տեղի է ունենում կանխարգելելու համար որևէ գործունեություն, որը անօրինական է, կամ որը կարող է SDG&E-ին ենթարկել օրինական պատասխանատվության կամ վնասի: SDG&E-ն հանձն է առել պահպանել կայքէջի անվտանգությունը և նրա շարունակական համապատասխանումը օրենքներին, որպեսզի այս ծառայությունը մնա մատչելի բոլոր այցելուներին:

### **Կապեր**

Այս կայքէջը կարող է ժամանակ առ ժամանակ «կապեր» ("links") ներկայացնել զանազան կառավարական, արդյունաբերական ընկերակցությունների և այլ երրորդ կողմի կայքէջերի կամ նյութերի համար: Այս կապերը ներկայացվում են տեղեկատվական նպատակով միայն: SDG&E-ն չի մակագրում երրորդ կողմերի մատուցած խորհուրդների, ապրանքների կամ ծառայությունների վրա: Միայն երրորդ կողմն է պատասխանատու երրորդ կողմի կայքէջով ներկայացված տեղեկությունների համար այնքանով՝ ինչքանով երրորդ կողմի նյութերը պարունակում են իրողությունների հաստատումներ, հանձնարարություններ կամ որևէ այլ մեկնաբանություն կամ խորհուրդ, և SDG&E-ն ոչ մի ներկայացուցչական հանգամանք չի կրում դրանց ճշգրտության, ամբողջականության կամ պատշաճության վերաբերյալ որևէ նպատակով: Ավելին, SDG&E-ն չի ճշտել երրորդ կողմի կայքէջի կամ այնտեղ հյուրընկալված նյութերի վրա տարածվող գաղտնիության քաղաքականությունը, ոչ էլ որոշել է, թե այդ կողմերը ինչպիսի քայլերի կոլիմեն այցելուների գաղտնիության կապակցությամբ: SDG&E-ն ոչ մի դեպքում պատասխանատու չի լինի որևէ երրորդ կողմի պարունակության, քաղաքականությունների կամ գործողությունների համար:

### **Գաղտնիության Քաղաքականության Վերամշակումներ**

(վերջին թարմացումը՝ 7 նոյեմբերի 2006 թ.)

SDG&E-ն իրեն է վերապահում ցանկացած ժամանակ և առանց ծանուցագրի Գաղտնիության Քաղաքականության վրա մի բան ավելացնելու, այն փոխելու, բարեփոխելու կամ թարմացնելու իրավունքը, վերամշակված քաղաքականությունը ներկայացնելով իր կայքէջից: Ցանկացած վերամշակված Գաղտնիության Քաղաքականություն ուժի մեջ կմտնի անմիջապես՝ այն հրապարակելու պահից: Այսուհանդերձ, վերամշակման թվականը կհրապարակվի ամեն անգամ քաղաքականությունը թարմացնելիս:

### **Հարցեր կամ Նկատողություններ**

Եթե հարցեր կամ նկատողություններ ունեք (ա) մեր կայքէջի Գաղտնիության Քաղաքականության, կամ (բ) այս կայքէջին վերաբերվող որևէ այլ հարցի, SDG&E-ի կամ իր ծառայությունների մասին, խնդրում ենք դիմել SDG&E-ին է-նամակով՝ [info@sdge.com](mailto:info@sdge.com), կամ հեռախոսով՝ (800) 411-SDGE, կամ սովորական փոստով՝ 8330 Century Park Court, San Diego, CA 92123-1538:

Խնդրում ենք նկատի ունենալ, որ այնուամենայնիվ այս կապերին կամ SDG&E-ի հետ թղթակցություններին վերաբերվող տեղեկությունները կարող են պահպանվել մի թղթածրարում, որը հատկացված է ձեզ: